# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **08.12.2021թ.**

08.12.2021թթ. ժամը 12:30-ին ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ Ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Հարությունյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ, |
| Ա. Մակարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալ, |
| Լ. Ալավերդյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի ավագ հաշվապահ, |
| Ժ. Մարգարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի ավագ հաշվապահ, |
| Ն. Դանիելյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի հաշվապահ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Հարությունյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 բողոքի քննություն կատարելու վերաբերյալ:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

**2. ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԹԻՎ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 բողոքի վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասի Հանձնաժողովը որոշեց կասեցնել ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166 ծածկագրով ընթացակարգի գնման գործընթացը՝ բողոքարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

**3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ և ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 բողոքի շրջանակներում բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակվելու օրվան հանջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*
Նարինե Հարությունյան ____________ (ստորագրություն)

*Հանձնաժողովի անդամներ՝*
Անի Մակարյան ____________ (ստորագրություն)

Լալա Ալավերդյան ____________ (ստորագրություն)

Ժաննա Մարգարյան ____________ (ստորագրություն)

Նարինե Դանիելյան ____________ (ստորագրություն)

*Հանձնաժողովի քարտուղար՝*
Մ. Ղազարյան ____________ (ստորագրություն)